


1.2.5. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել է 19.5%-ով:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ, %	2003թ. մայիս	2003թ. մայիսը 2003թ. ապրիլի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ թվում՝	2394.3	119.5	642.0	132.6
երկաթուղային տրանսպորտով	839.8	119.3	225.8	121.2
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	84.2	128.0	21.7	131.5
ներկրվել են բեռներ	355.6	95.7	94.6	131.8
ներհանրապետական փոխադրումներ	400.0	150.2	109.5	111.7
ավտոտրանսպորտով	1111.4	112.0	354.9	150.1
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	28.4	44.9	7.1	100.0
ներկրվել են բեռներ	115.1	111.2	27.8	100.0
ներհանրապետական փոխադրումներ	967.9	114.2	320.0	158.8
օդային տրանսպորտով¹	3.0	96.8	0.7	116.7
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	0.9	81.8	0.2	100.0
ներկրվել են բեռներ	2.1	105.0	0.5	125.0
խողովակաշարային տրանսպորտով	440.1	146.1	60.6	99.5

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-մայիսին, %



2002թ. հունվար-մայիսին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 35.1%, ավտոնոբիլայինը՝ 49.7%, օդայինը՝ 0.2% խողովակաշարայինը՝ 15.0%:

¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

Երկաթուղային տրանսպորտ: 2003թ. հունվար-մայիսին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել է 19.3%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 42.3% (2002թ. հունվար-մայիսի 52.8 %-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 10.0% (2002թ. հունվար-մայիսի 9.3%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 47.7% (2002թ. հունվար-մայիսի 37.9%-ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2003թ. հունվար-մայիսին 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ զուգավոր մետաղների հանքաքարի փոխադրման ծավալն ավելացել է 2.9 անգամ, քարածխինը՝ 2.1անգամ, անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 45.0 %-ով, հանքային շինարարական նյութերինը՝ 30.2%-ով: Սև մետաղների փոխադրման ծավալը նվազել է 33.3 %-ով, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 25.3%-ով, սև մետաղների ջարդոնինը՝ 18.6 %-ով, նավթ և նավթամթերքինը՝ 5.1%-ով, քիմիական և հանքային պարարտանյութերինը՝ 3.3 %-ով, ցեմենտինը՝ 2.3 %-ով:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2003թ. հունվար-մայիսին կազմել է 85 վազոն և 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ ավելացել 18 միավորով, իսկ բեռնումը կազմել է 55 վազոն և ավելացել 15 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 11.2 օր և 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ դանդաղել է 3.3 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մայիսի ցուցանիշի նկատմամբ աճել է 12.0%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 10.3% (2002թ. հունվար-մայիսի 10.4%-ի դիմաց), դրանից ԶԶ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 7.3% (2002թ. հունվար-մայիսի 8.1%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.6% (2002թ. հունվար-մայիսի 4.5%-ի դիմաց), դրանից ԶԶ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 12.7% (2002թ. հունվար-մայիսի 4.2%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 87.1% (2002թ. հունվար-մայիսի 85.1%-ի դիմաց):

Օդային տրանսպորտ: 2003թ. հունվար-մայիսին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ նվազել է 3.2%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 70.0 % (2002թ. հունվար-մայիսի 64.5 %-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 30.0% (2002թ. հունվար-մայիսի 35.5 %-ի դիմաց):

Խողովակաշարային տրանսպորտ: 2003թ. հունվար-մայիսին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մայիսի ցուցանիշի նկատմամբ աճել է 46.1 %-ով:

Բեռնաշրջանառություն: 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել է 42.7 %-ով:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների


	2003թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ, %	2003թ. մայիս	2003թ. մայիսը 2002թ. ապրիլի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝	832.1	142.7	141.5	106.4
Երկաթուղային տրանսպորտով	215.2	135.9	56.3	122.7
ավտոտրանսպորտով	22.6	130.6	3.5	76.1
օդային տրանսպորտով	2.2	110.0	0.2	33.3
խողովակաշարային տրանսպորտով	592.1	146.1	81.5	99.5

Ուղևորափոխադրումներ: 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մայիսի ցուցանիշի նկատմամբ աճել է 12.1%-ով:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մայիս	2003թ.հունվար-մայիսը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ,%	2003թ. մայիս	2003թ. մայիսը 2003թ. ապրիլի նկատմամբ,%
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	69310.7	112.1	14533.3	101.1
<i>այդ թվում՝</i>				
երկաթուղային տրանսպորտով	412.1	111.3	88.1	98.2
ավտոտրանսպորտով	59025.4	115.8	12356.7	100.2
<i>որից՝</i>				
թեթև մարդատար տաքսիներով	370.5	170.6	83.4	110.9
օդային տրանսպորտով ¹	296.8	109.6	74.4	117.7
էլեկտրատրանսպորտով	9576.4	93.6	2014.1	106.0

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-մայիսին, %



2002թ. հունվար-մայիսին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.6%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 82.4%, օդային տրանսպորտինը՝ 0.4% և էլեկտրատրանսպորտինը՝ 16.6%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2003թ. հունվար-մայիսին կազմել է 67.3%, իսկ տրոլեյբուսով՝ 19.5%, տրամվայով՝ 10.9% և ճոպանուղով՝ 2.3 %:

Ուղևորաշրջանառություն: 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել է 7.2 %-ով:

¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ, %	2003թ. մայիս	2003թ. մայիսը 2003թ. ապրիլի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղևոր-կմ այդ թվում՝	1005.8	107.2	209.8	109.5
Երկաթուղային տրանսպորտով	15.2	91.0	3.2	97.0
ավտոտրանսպորտով	729.2	114.2	149.5	105.7
որից՝				
թեթև մարդատար տաքսիներով	2.6	173.3	0.6	120.0
օդային տրանսպորտով	223.0	92.3	49.2	125.8
էլեկտրատրանսպորտով	38.4	93.0	7.9	102.6

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2003թ. հունվար-մայիսին ճանապարհատրանսպորտային պատահարները 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ նվազել է 12.1 %-ով:

Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2003թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ, %	2003թ. մայիս	2003թ. մայիսը 2003թ. ապրիլի նկատմամբ, %
Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհանենը	283	87.9	52	100.0
Ձուկվել են, մարդ	70	106.1	8	36.4
Վիրավորվել են, մարդ	372	96.4	68	119.3